



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆՆ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ՀԵՏ

Արեւմտեան մեր Թեմի օգտաշատ աւանդութիւններէն է Թեմակալ Առաջնորդին, Ազգային Վարչութեան ու ծխական շրջաններու հոգեւոր հովիւներուն եւ հոգաբարձական կազմերուն միջեւ հերթական հանդիպումները, որոնց ընթացքին միասնաբար քննարկման կ'ենթարկուին հասարակաց հարցեր, ծրագիրներ եւ դժուարութիւններ հարթելու միջոցներ:

Այս հանդիպումներուն ծիրին մէջ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Ազգային Վարչութիւնը Երեքշաբթի, 11 Մայիսի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ հիւրընկալեցին մեր եկեղեցիներու հոգեւոր հովիւներն ու հոգաբարձական կազմերը: Այս հանդիպումը յատուկ կարեւորութիւն ունէր, որովհետեւ մաս կը կազմէր Թեմիս Ազգ. Երեսփոխանական Ժողովի 38րդ նստաշրջանի (14 եւ 15 Մայիսին) նախապատրաստական աշխատանքներուն: Խորհրդակցական բնոյթով այս ժողովին ներկայ եղաւ նաեւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներէն Տիար Խաժակ Տիգրիճեան:

Ժողովը բացուեցաւ ժամը 7:45ին, Առաջնորդ Սրբազանին աղօթքով եւ ողջոյնի խօսքով: Առաջնորդ Սրբազանը, ապա նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան վեր առին ժողովին նպատակը, այսպէսով հունի մէջ դնելով խորհրդակցութիւնները:

Ծխական շրջաններու հոգաբարձութեանց ատենապետները կամ ներկայացուցիչները հակիրճ զեկուցումներ ներկայացուցին իրենց նորագոյն իրագործումներուն եւ ծրագիրներուն մասին, անդրադարձան իրենց աշխատանքներուն դիմաց կանգնող դժուարութեանց ու խոչընդոտներու, որոնք կը բխին նաեւ երկրի տնտեսական ծանօթ տագնապէն: Նկատելի էր, որ շրջանները ընդհանրապէս, ճիգերու լարումով ու հետեւողականութեամբ, յաջողած են մեծ մասամբ հարթել դժուարութիւնները եւ ապագային կը նային նոյն վճռակամութեամբ:

Հանդիպումին վերջին բաժինը յատկացուեցաւ հասարակաց հարցերու մասին խորհրդակցութիւններու եւ մանաւանդ աշխատանքի դաշտերէն ձեռք բերուած փորձառութեանց մասին եւ բաժնեկցութեան, ինչ

որ մեծապես պիտի նպաստե յառաջիկայ աշխատանքներու ծրագրաւորումին:

Եզրափակիչ իր խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը գնահատանքով անդրադարձաւ հովիւներուն ու հոգաբարձութեանց նուիրեալ ծառայութիւններուն եւ օրհնութեան աղօթքով փակեց ժողովը: Հանդիպումը վերջ գտաւ «Կիլիկիա»ի խմբերգումով:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEET WITH PASTORS AND BOARDS OF TRUSTEES

In preparation for the 38th Representatives Assembly which will be convene at the Prelacy on May 14, 2010, by the invitation of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council, on the evening of Tuesday, May 11th, 2010, Pastors and Boards of Trustees of Prelacy Churches gathered at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall to discuss the general activities as well as the concerns of their respective parishes. Central Executive member Mr. Khajag Dikijian also participated in the meeting.

The meeting opened with the Prelate's invocation, after which the Prelate and Executive Council Chair Dr. Garo Agopian welcomed the representatives and briefed them on the purpose of the meeting.

Subsequently, one by one the Chairman or Board of Trustees representative of each church were invited to report on the past, present, and future activities of their churches and challenges they face.

After the presentations, the representatives had the opportunity to discuss issues of concern to all parishes and to share their experiences and offer suggestions to one another.

At the conclusion the Prelate commended the service of the Pastors and Boards of Trustees and wished them success in their future endeavors. The meeting closed with the benediction by the Prelate and the singing of the Cilician anthem.